



ԻՆԻՍՏԻԹՈՒՏՈՒԹՅՈՒՆ



ՍՈՖՅԱ ՕՀԱՆՅԱՆ

ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության
ամբիոնի դոցենտ,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ԵՐԿԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎՐԱ ԱՆՀԱՏԻ ՈՒՆԵՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԸ

Հիմնաբառեր. պատմություն, պատմական ընթացք, պատմության
փիլիսոփայություն, պատմական ռեալիզմ, շարժիչ ուժեր,
անհատ, զանգվածներ

Պատմության փիլիսոփայության կարևորագույն հարցերից մեկն այն գործոնների բացահայտումն է, որոնք ազդում են պատմության ընթացքի, պատմական իրադարձությունների վրա, ինչն անմիջականորեն կապված է այն հարցի պարզաբանման հետ, թե որքանով է պատմությունը մարդու ստեղծած երևույթ: Խնդիրը կարևորվում է նաև հետևյալ առումով. որքանով է անհատն ազդում պատմության ընթացքի վրա կամ ազդո՞ւմ է արդյոք: «Մարդիկ են արարում պատմությունը» ակնհայտ ճշմարտությունից բխում են բանավիճային մի շարք հարցեր, օրինակ՝ մարդկային ընդհանուր գործունեության մեջ ինչպիսի՞ն է ականավոր անհատների դերը: Պատմության փիլիսոփայության մեջ այդ խնդիրը ձևակերպվել է որպես «պատմության շարժիչ ուժերի հարց», որի վերաբերյալ կան տարբեր, երբեմն իրար տրամադծորեն հակադիր տեսակետներ և ուղղություններ: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, իրադարձություններ, երբ տարբեր երկրներում, առանձին ժամանակաշրջաններում նշանավոր անհատների փոխարինումը չի առաջացրել վճռորոշ փոփոխություններ: Բայց, անկասկած, լինում են առանձին ժամանակահատ-

վածներ ու հանգամանքներ, երբ, թվում է՝ այդ անհատների վարքագծի, բնավորության գծերի, քմահաճույքի դրսևորումներից է կախված ոչ միայն առանձին հասարակությունների, այլև ամբողջ մարդկության ապագան: Ընդ որում, այդպիսի ճակատագրական պահերը միշտ կապված են պատմական առանձին գործիչների գործունեության և ազդեցության հետ: Պատմության մեջ անհատի դերի գնահատման հիմնախնդիրը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ ոչ միայն անհատի բնույթով, այլև հասարակությանը ժամանակաշրջանի առաջադրած խնդիրներով, դարաշրջանի պատմական առանձնահատկություններով, ինչպես նաև գիտելիքի համակարգում պատմության փիլիսոփայության ու տեսության նշանակությամբ: Բնականաբար, խաղաղ ժամանակաշրջաններում անհատի դերը նվազում է, արմատական փոփոխությունների շրջաններում՝ աճում: Հետևաբար՝ որոշել, թե ինչից է կախված անհատի դերը՝ իրենից, պատմական իրավիճակից, պատմական անհրաժեշտությունից ու օրենքներից, պատահականություններից, թե ամեն ինչից, ինչ համակցությամբ ու հատկապես ինչպես, բարդ է. պատասխանը մեծապես կախված է ընտրված տեսանկյունից, դիտարկվող ժամանակաշրջանից և հետազոտողի մեթոդաբանական դիրքորոշումից:

Արդի ժամանակաշրջանը լի է հեղափոխական նշանակություն ունեցող իրադարձություններով, ընդ որում, ոչ միայն առանձին երկրների, այլև ամբողջ աշխարհի առումով: Չնայած XX դարի վերջերին «պատմության վերջի» մասին արվող կանխատեսումներին՝ վերջին տասնամյակների իրադարձությունները հակառակն են ապացուցում: Պատմությունը մոտեցել է ոչ թե վերջին, այլ թևակոխել է ահռելի փոփոխությունների փուլ: Մարդկությունը հայտնվել է զարգացման նոր շրջադարձային մեկնակետի մոտ, իսկ այդպիսի դարաշրջաններում պատմության սուբյեկտների գործողությունները որոշակի դեպքերում կարող են հսկայական ազդեցություն ունենալ պատմական գործընթացների հետագա զարգացման վրա:

Այն գաղափարը, որ ականավոր մարդն ամենուր կանգնած է պատմության շրջադարձային կետերում, հաճախ է արտահայտվել: Բայց անհատի դերը, ճիշտ է, ոչ որպես զուտ տեսական խնդիր, առավել տեսանելի եղավ Վերածննդի դարաշրջանում, հատկապես վաղ շրջանում, երբ պատմության ընթացքի հումանիստական յուրահատկությունը մղվեց առաջին պլան, ինչն էլ սրեց հետաքրքրությունը նշանավոր մարդկանց կենսագրությունների և գործունեության նկատմամբ:

Նոր ժամանակում՝ հատկապես XVII դարում, ընդհանուր առմամբ, անհատի դերի հարցը տեսության մեջ կարևորագույններից չէր: Լուսավորականության դարաշրջանում, հակառակը՝ տեսության մեջ իշխում էր այն տեսակետը, որ ականավոր անհատը (միապետը) կարող է արմատապես փոխել պատմության ընթացքը, եթե գիտակցի դրա անհրաժեշտությունը և ունենա բավարար կամք ու միջոցներ: Հենց Լուսավորականության շրջանից է անհատի դերի թեման դարձել տեսական կարևոր հիմնախնդիրներից մեկը: Սակայն անհատի դերի հիմնախնդրի ավելի կամ պակաս զարգացած հայեցակարգեր ու ձևակերպումներ հայտնվեցին միայն XIX դարում, երբ ուսումնասիրություններում փորձում էին համադրել պատմական զարգացման գործընթացները և առանձին անհատների ծավալած գործունեությունը:

Տեսական, փիլիսոփայական տեսանկյունից նշանավոր անհատի պատմական դերակատարման հարցը հիմնավորել է հատկապես Ֆ. Նիցշեն գեր-

մարդու հիմնախնդրի մասին հայեցակարգի մշակմամբ: Առաջադրելով համաձայնեցող անհատականության պաշտամունքը՝ Նիցշեն ընդգծում էր, որ գերմարդն է կյանքին բովանդակություն, արժեք ու իմաստ հաղորդում: Գերմարդը Նիցշեի համար նոր արժեքների ստեղծողն ու կրողն է, որի շուրջը պտտվում է աշխարհը¹: Պատմության թատերաբեմում եղել են այնպիսի անհատներ (Հերակլիտես, Զրադաշտ, Ալեքսանդր Մակեդոնացի, Հուլիոս Կեսար, Կարլոս Մեծ, Գյոթե, Նապոլեոն և ուրիշներ), որոնց առաքելությունն էր նոր իդեալներ պատգամելն ու մարդկային կյանքը դեպի լավագույն ապագան մղելը:

Նիցշեն ապրում էր մի շրջանում, երբ մեծ հեղափոխությունների և սոցիալական շարժումների կարգախոսները պահպանել էին իրենց ուժը, թեև ոչ նախկին հզորությամբ: Դեռևս XIX դարի 40-ական թթ. սկսված հեղափոխական-սոցիալիստական ու դեմոկրատական այդ շարժումները նա համարում էր անկման արտահայտություն, քանի որ դրանք հենվում էին զանգվածների բարոյության իդեալի վրա: Ջանգվածը դարձել էր զարգացման ու առաջընթացի չափանիշը: «Փոքր մարդիկ», վերածվելով տերերի, քարոզում էին խոնարհություն, համեստություն, ներողամտություն, այն ամենը, ինչը բխում է ճորտությունից և ամբոխավարությունից: Այդ պատճառով ստեղծագործական ոչինչ չտեսնելով զանգվածի մեջ, այն համարելով մշակույթի ու զարգացման խոչընդոտը՝ Նիցշեն սոցիալիզմի ու դեմոկրատիզմի «բոլորի հավասարության» կարգախոսին հակադրում էր իր՝ «բոլորի անհավասարության» կարգախոսը:

XX դարի I կեսին անհատի դերի գնահատումը պատմության փիլիսոփայության մեջ դարձավ արդիական, քանի որ պարզվեց (առաջին հայացքից անսպասելիորեն), որ ասես անհայտությունից հայտնված գործիչները (Լենին, Մուսոլինի, Հիտլեր և ուրիշներ) ընդունակ են «հեղաշրջելու» ոչ միայն իրենց երկրները, այլև ողջ աշխարհն ու կյանքի ամբողջ դրվածքը:

Այս համատեքստում և «բոլորի հավասարության» գաղափարի հաղթարշավի տարիներին պատմության ընթացքի վրա առանձին անհատի ունեցած ազդեցության ուսումնասիրությանն է դիմել նաև XX դարի սկզբի հայ ականավոր փիլիսոփաներից մեկը՝ Երվանդ Ֆրանգյանը². «Չկային բարձր մար-

¹ Տե՛ս Ֆ. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, Եր., 2008, էջ 104:

² Երվանդ Ֆրանգյանը ծնվել է 1878 թ. Իզմիրում: Սովորել ու աշխատել է Երևանի, Թավրիզի թեմական դպրոցներում: Որպես ՀՅԴ կուսակցության անդամ մասնակցել է հասարակական-քաղաքական կյանքին, միաժամանակ ուսումնասիրություններ կատարել Ատրպատականի պատմության, տնտեսության, ազգագրության վերաբերյալ («Ատրպատական», 1905 թ.): 1905-1912 թթ. ընդհատումներով սովորել ու ավարտել է Բեռլինի համալսարանի պատմափիլիսոփայության բաժինը, «Միխայլովսկին» որպես փիլիսոփա-սոցիոլոգ» ատենախոսության համար ստացել փիլիսոփայության դոկտորի կոչում: 1913-1915 թթ. եղել է հոգեբանության և պատմության դասախոս Բաքվի իզական գիմնազիայում, 1915-1917 թթ.՝ Բաքվի հայկական ու իզական դպրոցների տեսուչ, 1918-1919 թթ.՝ Թեհրանի հայոց դպրոցի տեսուչ: 1919-1920 թթ. Երևանի Ալեքսանդրյան գիմնազիայի տեսուչն էր և, միաժամանակ, կառավարության կազմակերպած տարրական ու բարձրագույն դասընթացների ղեկավարը: 1920 թ. (մինչև Հայաստանի խորհրդայնացումը), դասախոսել է Հայաստանի համալսարանում՝ որպես դոցենտ: Փետրվարյան հեղաշրջումից հետո նա մեկնել է Պարսկաստան, դարձել իր կազմակերպած՝ Սուրմալուի փրկության կոմիտեի նախագահը, մասնակցել ձկնառի պաշտպանությանը, ստանձնել Ղազվինի, Սուլթանապատի, այնուհետև Համադանի հայկական դպրոցների տեսչի պաշտոնը: Մահացել է 1928 թ.:

Ե. Ֆրանգյանի կարևորագույն աշխատություններից են «Պատմափիլիսոփայություն», «Նիցշեի փիլիսոփայությունը», «Պեսիմիզմի փիլիսոփան», «Հունական փիլիսոփայություն», «Հասարակագիտական էություններ», «Մեր փիլիսոփայական աշխարհայացքը» ուսումնասիրությունները: Հրատարակել է «Միտք» գիտական-փիլիսոփայական ժողովածուն, աշխատակցել է «Արև»,

դիկ, խիզախ հոգիներ: Բոլորը տափակել էին: Ամբոխն էր իրականութեան տէրը և ղեկավարը, տափակ ուղեղների և բութ սրտերի այդ ոհմակը: Ստրուկների մօրալն էր թևատարած իշխում: Խիզախ, ըմբոստ, բարձր և շանթահարող հոգիների բացակայությունը շատ էր զգալի այդ միջոցին՝ ցնցող մղումներ և հարածներ տալու»³:

Հետևելով Է. Մախին և Ռ. Ավենարիուսին՝ Ֆրանգյանն իր փիլիսոփայությունն անվանում է համադրական մոնիզմ կամ քննադատական-իրապաշտ փիլիսոփայություն: Համադրական մոնիզմի փիլիսոփայության հիմքում ընկած է գաղափարների փոխադարձ լրացման սկզբունքը: Առաջին հերթին դա վերաբերում է իմացաբանության մեջ սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությանը: Առանց սուբյեկտի՝ չկա օբյեկտ, և առանց օբյեկտի՝ չկա սուբյեկտ: Դրանցից որևէ մեկի առաջնայնության հարցն անիմաստ է, որովհետև գոյություն ունեն միաժամանակ, ընդ որում, յուրաքանչյուրն իմաստ ու արժեք է ստանում փոխադարձ հարաբերությամբ. «Ենթական (սուբյեկտ) եւ առարկան (օբյեկտ) համարժեք են իբրև փորձի հաւասար եւ համագոր անդամներ: Այն հարցը, թէ դրանցից որն է առաջնական եւ որն է որից ծագում,- զուտ բնագանցական հարց է»⁴: Հոգեբանության մեջ միմյանց լրացնում են մարդկային հոգու երեք հիմնական տարրերը՝ մտածողությունը, կամքը և զգացումը. «...կամքի, զգացումի եւ իմացականութեան կամ մտքի բիւրեղացած պրօցէսներ տեղի չեն ունենում»⁵: Մարդու այդ կարողությունները գործում են միասնական և միաժամանակ, թեև տարբեր պահերի դրանցից մեկը կարող է գերակայություն ունենալ մյուսների նկատմամբ: Սոցիալական փիլիսոփայության և պատմության փիլիսոփայության մեջ համադրական մոնիզմը դրսևորվում է որպես պատմական ռեալիզմի տեսություն, ըստ որի՝ պատմական գործընթացը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ իրատեսորեն գնահատելով այդ գործընթացին մասնակցող յուրաքանչյուր տարրի և ուժի տեղն ու դերը: Պատմափիլիսոփայական գրականության մեջ սոցիալ-պատմական զարգացման առաջնիչ ուժեր ու գլխավոր ազդակներ են համարվել կրոնական զգացումը, տնտեսական շահը, ռասաները, ազգամիջյան բախումները, աշխարհագրական դիրքն ու պայմանները, հոգեբանությունն ու հոգեկերտվածքը, միտքն ու բանականությունը և այլն: Սակայն պատմական ռեալիզմի տեսանկյունից նման մոտեցումները գնահատվում են որպես միակողմանիություններ, ինչի հետևանքով էլ անհնար է բացատրել հասարակական-պատմական ընթացքի և զարգացման բարդ օրինաչափությունները. «Պատմական պրօցէսի տարրերից մէկը չի ներկայանում իբր պատճառ, միւսը՝ հետեւանք, մէկը՝ առաջնական, միւսը՝ երկրորդական, մէկը՝ ակտիվ, միւսը՝ պասիւ: Նրանք համարժեք են եւ գտնուում են մշտական փոխազդեցութեան մէջ»⁶: Սակայն պատմական ռեալիզմը չի անտեսում այն փաստը, որ տարբեր դարաշրջաններում որոշիչ կարող են լինել տարբեր ազդակներ, գործոն-

«Գործ», «Հորիզոն» թերթերին, «Դրոշակ», «Նոր հոսանք», «Մուրճ», «Գեղարվեստ» ամսագրերին:

³ Ե. Ֆրանգյան, Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը (նրա մահուան 10-եակի առիթով. 1900-1910), Թիֆլիս, 1910, էջ 81-82:

⁴ Ե. Ֆրանգյան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը. իրապաշտ փիլիսոփայություն. Հ.Յ.Դաշնակցության փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնաւորման փորձ, Փարիզ, 1929, էջ 92:

⁵ Նույն տեղում, էջ 138:

⁶ Ե. Ֆրանգյան, Հասարակագիտական էտիոլոգիա. Հ.Յ.Դաշնակցության սոցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողութեան հիմնաւորման շուրջը, Բագու, 1917, էջ 104:

ներ և տարրեր: Ֆրանգյանի կարծիքով՝ այդ տարրերի միջև գոյություն ունեն ոչ թե պատճառահետևանքային, այլ գործառնության հարաբերություններ:

Պատմական ռեալիզմի դիրքերից է Ֆրանգյանը քննարկում նաև պատմության ընթացքի վրա անհատի ազդեցության գնահատման հարցը:

Պատմական գործընթացների վրա անհատի ազդեցության հարցը մասնագետների միջավայրում միանշանակ լուծում չունի: Տեսակետներից մեկը ներկայացնող պատմաբանները, պատմափիլիսոփաներն ու սոցիոլոգները, դետերմինիզմի կամ ճակատագրապաշտության դիրքերից ժխտելով անհատի դերը պատմության մեջ, շեշտում են զանգվածի նշանակությունը՝ դա դիտելով որպես պատմական էվոլյուցիայի և առհասարակ սոցիալ-քաղաքական զարգացման առաջնորդ գործոն: Այդ տեսակետը լավագույնս ներկայացնում է մարքսիզմը. անհատի դերի մասին մի շարք դրույթներ դասական ձևով ձևակերպել է Ֆ. Էնգելսը, բայց առավել համակարգված շարադրված է Գ. Պլեխանովի «Պատմության մեջ անհատի դերի հարցի շուրջ» աշխատությունում: Մարքսիստները համարում էին, որ անհատը պատմական իրադարձություններին կարող է որոշակի ինքնատիպություն հաղորդել, կամ, Պլեխանովի արտահայտությամբ, անհատը կարող է միայն անհատական հետք թողնել իրադարձությունների անխուսափելի ընթացքի վրա՝ արագացնել կամ դանդաղեցնել պատմական օրենքի իրականացումը, բայց ի վիճակի չէ ոչ մի պարագայում փոխել պատմության ծրագրավորված ընթացքը: Եվ եթե չլինեք տվյալ անհատը, ապա նրան անպայման կփոխարինեք մյուսը, որը կկատարեք պատմական միևնույն դերը⁷:

Մեկ այլ տեսակետի ներկայացուցիչներ, հակառակը, վոյունտարիստական դիրքերից ընդգծում են անհատների անփոխարինելի դերը պատմական գործընթացներում՝ համարելով, որ պատմությունը կերտում են անհատները, այսպես կոչված, «նշանավոր մարդիկ»: XIX դարի անգլիացի պատմաբան փիլիսոփա Թ. Կառլայլն իր «Հերոսները, հերոսների ու հերոսականի երկրպագությունը պատմության մեջ» աշխատության մեջ քարոզում էր բացառիկ անհատների («հերոսների») պաշտամունք՝ պնդելով, որ պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ անհատների, նշանավոր մարդկանց կենսագրությունների գումար: Ավստրիացի գրող, կենսագիր, քննադատ Ս. Ցվայգը գրում էր. «Միլիոնավոր մարդկանցից, որ ժողովուրդ են կազմում, ծնվում է միայն մի հանձար... Մի միակ «այո» կամ «ոչ», մի «չափազանց վաղ է» կամ «չափազանց ուշ» կանխորոշում է հարյուրավոր սերունդների բախտը, ուղղություն է տալիս առանձին մարդկանց, ամբողջ ժողովրդի կամ նույնիսկ բովանդակ մարդկության կյանքին»⁸:

Բայց փիլիսոփաներն աստիճանաբար հեռացան ինչպես խիստ դետերմինիստական ու ճակատագրապաշտական տեսություններից, որոնք ստեղծագործական պատմական դեր չէին վերագրում անհատներին, այնպես էլ վոյունտարիստական տեսություններից, որոնց համաձայն՝ անհատը կարող է փոխել պատմության ընթացքն այնպես, ինչպես հարմար է իրեն: Գնահատելով պատմության փիլիսոփայության իշխող հոսանքները՝ XIX դարավերջի մտածող Ռապոպորտը գրում էր, որ անհատի մասին հարցը, երկու վերը

⁷ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Գ. Պլեխանով, Պատմության մեջ անհատի դերի հարցի շուրջ, Փիլիսոփայական ընտիր երկեր 5 հատորով, հ. 5, Եր., 1962, էջ 311-348:

⁸ Ս. Ցվայգ, Մարդկության աստեղային ժամերը (պատմական մանրապատումներ), Եր., 1974, էջ 3-4:

նշվածներից բացի, ենթադրում է նաև «անհատի պատմական նշանակության երրորդ հնարավոր լուծումը», որը «...սուբյեկտիվ և օբյեկտիվ տեսակետների համակցություն կամ հաշտեցումն է: Անհատը պատմական զարգացման և՛ պատճառն է, և՛ արդյունքը»⁹:

Ե. Ֆրանգյանը ևս, վերը նշված տեսակետները համարելով միակողմանի և ընդգծելով դրանց սահմանափակությունները, ըստ գաղափարների փոխլրացման սկզբունքի, ընդունում է թե՛ զանգվածների, թե՛ անհատների դերը պատմության մեջ¹⁰: Նրա կարծիքով՝ ծայրահեղ տեսակետները բացարձակացնում են կամ անձնական նախաձեռնությունը, կամ պատմության անդեմ (անանձնական) բնույթը: Իրականում չի կարող լինել պատմական գործչի ու զանգվածի բացարձակ հակադրություն, կարծում է Ֆրանգյանը, քանի որ, վերջին հաշվով, միշտ ծագում է մարդկանց որոշակի աստիճանակարգություն, որոնք ավելի մոտ են կանգնած գործչին և մի կողմից՝ գործում են նրա գաղափարների (կամքի, ծրագրերի և այլն) իրականացման ուղղությամբ, իսկ մյուս կողմից՝ ազդեցություն են գործում նրա վրա: Բայց, այնուամենայնիվ, հաճախակի են այն դեպքերը, երբ անհատն ու զանգվածը բաժանված են որոշակի որակական պատմեշով, մասնավորապես՝ երբեմն անհատը սկսում է գործել միայնակ, և միայն հետո ծագում է նրա հետնորդների ու համախոհների աստիճանակարգություն:

Ընդհանուր առմամբ, դա ճիշտ ուղի է, թեև երբեմն «միջին» ուղու վրա մնալը դժվար է: Կարծում ենք՝ դա բացատրվում է նրանով, որ երբ փիլիսոփաները որպես պատմության շարժիչ ուժեր առաջին պլան են մղում գաղափարները, քմահաճույքները, ֆիզիկական առանձնահատկությունները, նրանք դրանով գերազնահատում են անհատների դերը: Իսկ պատմության մեջ նյութական և այլ օբյեկտիվ շարժիչ ուժերի որոնումը, ինչը հատուկ է մարքսիզմին, աշխարհագրական դպրոցին ու էվոլյուցիոնիզմին, հանգեցնում է անհատի դերի նվազեցմանը: «Միջին» ուղին հնարավորություն չի տալիս պատասխանելու շատ հիմնահարցերի, մասնավորապես՝ երբ և ինչու անհատը կարող է վճռորոշ ազդեցություն գործել իրադարձությունների վրա, երբ՝ ոչ:

Իսկ ովքե՞ր են ժամանակի այդ «մեծ մարդիկ»՝ պատմական էվոլյուցիայի մեջ արժեքավոր դեր խաղացող անհատները: Ֆրանգյանը թերի է համարում այն ըմբռնումը, երբ «խոշոր անհատներ» ասելով նկատի են ունենում միայն թագավորներին, զորավարներին և քաղաքական գործիչներին: Իրոք, պատմության մեջ և առհասարակ կյանքում վճռական դեր խաղացող անհատներ կան իրականության բոլոր ոլորտներում՝ և՛ գիտության, և՛ արվեստի, և՛ քաղաքականության մեջ: Պատմության մեջ կարող են դեր խաղալ և՛ թագավորները, և՛ զորավարները, և՛ քաղաքական գործիչները, և՛ արվեստագետները, և՛ փիլիսոփաները, և՛ գիտնականները, և՛ կրոնների հիմնադիրները: Համաշխարհային պատմական անհատներն առաջին հերթին հոգևոր դեկավարներ են, ովքեր, հասկանալով, թե ինչ է պիտանի ու տեղին, իրենց հետևից տանում են մյուսներին՝ զանգվածը:

Այն միտքը, թե սոցիալական համակարգի զարգացման և պատմական գործընթացի խթանը տալիս են բարձրագույն խավերը, այսպես կոչված,

⁹ Раппопорт Х., Философия истории в её главнейших течениях. СПб., 1899, с. 47.

¹⁰ Այդ մասին տես Ե. Ֆրանգյան, Պատմափիլիսոփայութիւն, «Միտք. գուտ գիտական և փիլիսոփայական ժողովածու», Եր., 1910, էջ 77-78:

ընտրախաղը (էլիտա)՝ իր հետևից տանելով մյուսներին, արտահայտել է իտալացի սոցիոլոգ Վ. Պարետոն: Բայց առավել համակողմանիորեն այդ գաղափարը վերլուծել է անգլիացի պատմաբան Ա. Թոյնբին: Հասարակությունը, ըստ նրա, կազմված է ստեղծագործ փոքրամասնությունից և կրավորական մեծամասնությունից, որոնց փոխհարաբերությունը որոշվում է «Հեռացում-Վերադարձ» սկզբունքով: Պատմական գործընթացը ներկայացնելով որպես տեղային քաղաքակրթությունների հերթագայություն՝ Թոյնբին դրանց զարգացումը սահմանում է «Մարտահրավերի-Պատասխանի» օրենքով: Արտաքին՝ բնական և սոցիալական ուժերի նետած մարտահրավերը մղում է աճի, իսկ քաղաքակրթության զարգացումը որոշվում է նրանով, թե ընդունա՞կ է արդյոք ստեղծագործ փոքրամասնությունը հեռանալ ու գտնել մարտահրավերի պատասխանը: Պատասխանը գտնելուց հետո միայնակ ստեղծագործողները կամ ստեղծագործ փոքրամասնությունը դիմում են կրավորական մեծամասնությանը՝ համոզելով զնալ իրենց նախանշած ճանապարհով: «Ստեղծագործ անհատները,- գրում է Թոյնբին,- ցանկացած պայմաններում հասարակության մեջ փոքրամասնություն են կազմում, բայց հատկապես այդ մեծամասնությունն է սոցիալական համակարգին նոր կյանք հաղորդում»¹¹:

Այդ մարդիկ, կարծում է նաև Ֆրանգյանը, թեկուզ ինտուիտիվ կերպով, զգում, ըմբռնում են պատմական անհրաժեշտությունը: Նրանք սոսկ անհատներ չեն, այլ մտավոր ու բարոյական գիտակցության կրողներ, ովքեր առանձնանում են հետևյալ հատկություններով.

- ա) նրանց կատարած գործերը ոչ թե տեղական, այլ ընդհանուր նշանակություն են ունենում,
- բ) նրանց ազդեցության շրջանակը և գործունեության ոլորտը սահմանավակված չեն,
- գ) նրանք տեղ են գրավում քաղաքակրթության պատմության մեջ,
- դ) նրանք քննադատաբար են վերաբերվում հասարակական շարժումներին, պատմական կյանքի երևույթներին:

Ըստ Ֆրանգյանի՝ հռչակավորների աշխարհը կազմված է այնպիսի մարդկանցից, ովքեր ունեն կամ ունեցել են ինչպես տաղանդ, այնպես էլ պատմական նվաճումներ կատարելու հնարավորություն: Բայց ունեցած ազդեցությունը դեռ դրական գնահատականի հոմանիշը չէ: Առաջիններից մեկը, ում կարծիքով պատմության մեջ կարևոր դեր են խաղում ոչ միայն հերոսները, այլև անբարոյական գործիչները, Ն. Մաքիավելին էր: Իր «Տիրակալը» աշխատության մեջ նա այն տեսակետն է հայտնում, որ տիրակալի քաղաքականության նպատակահարմարությունից, անհրաժեշտ, այդ թվում և ամենանբարոյական միջոցները գործադրելու նրա ընդունակությունից է կախված քաղաքականության հաջողությունը, իսկ նրա գաղափարները փոքր-ինչ վերափոխելու դեպքում՝ նույնիսկ պատմության ընթացքը: Ավելի ուշ այդ գաղափարը զարգացրին մարքսիստները, որոնց կարծիքով պատմության մեջ գործում են ոչ միայն դրական, այլև բացասական գործիչները (առաջինները կարող են արագացնել, երկրորդները՝ դանդաղեցնել պատմության ընթացքը), թեև, կարծում ենք՝ «դրական» կամ «բացասական» դեր կոչվածը խիստ հարաբերական է՝ էապես կախված փիլիսոփայի ու պատմաբանի անհատական դիրքորոշումից, և դժվար է ասել, թե որն է համապատասխանում պատմական զարգացման տրամաբանությանը:

¹¹ Тойнби А., Постигание истории. М., 1996, с. 213.

Այս ընդհանուր համատեքստում է ներկայանում Ֆրանգյանը, ում կարծիքով ընդհանուր նշանակություն, ազդեցության ու գործունեության լայն սահմաններ ունեցող, քաղաքակրթության մեջ որոշակի տեղ զբաղեցնող, քննադատորեն մտածող անհատները կարող են լինել թե՛ օգտակար և թե՛ վնասակար, կատարել թե՛ դրական և թե՛ բացասական դեր: Բայց, ի տարբերություն մարքսիստների, նա նշում է, որ ականավոր անհատներն էվոյուցիայի համդեպ ունենում են եռակի դիրքորոշում: Նրանք կարող են խթանել, հետ մղել կամ կասեցնել էվոյուցիան: Ի դեպ, ժամանակակից գիտությունը ևս ընդունում է, որ անհատի դերը, դժբախտաբար, միշտ չէ, որ ուղիղ համեմատական է այդ նույն անհատի մտավոր ու բարոյական որակներին: «Մի բան է փառքը, տաղանդը, խառնվածքի ազնվագարնությունը, այլ բան՝ պատմության ընթացքի վրա ազդեցության աստիճանը: Պրանք ոչ միշտ են համընկնում»¹²:

Ինչպես նշվեց, Ֆրանգյանը չի անտեսում նաև զանգվածների նշանակությունը պատմական գործընթացներում: Հասարակական շարժումների, պատմական զարգացման մեջ նրանց դերը ևս անտարակուսելի է: Ջանգվածը ևս իր ցանկություններն է առաջադրում և դրանց համար պայքարում: Նա ունի իր կամքը, միայն թե դա կոլեկտիվ կամք է: Միշտ չէ, որ անհատական կամքը հակադրվում է կոլեկտիվ կամքին: Ֆրանգյանի համար որպես նախադրյալներ ընդունվող կոլեկտիվ և անհատական կամքերն ավելի հաճախ միմյանց ոչ թե հակադրվում, այլ լրացնում, ամբողջացնում են: Երբեմն էլ անհատական կամքն ավելի ուժեղ է լինում և ուղղություն է տալիս ժողովրդական զանգվածներին: Սակայն պատմական ընթացքի վրա անհատի և զանգվածի ազդեցություններն ունեն առանձնահատկություններ: Ժողովրդական զանգվածները, ամբոխներն ազդում են պատմության ընթացքի վրա, բայց ոչ այնքան գիտակցաբար, որքան մեքենայորեն, ինքնաբերաբար: Ջանգվածային շարժումների մեջ չկա գիտակցական խոր, պլանաչափ գործունեություն: Պետությունն ու հասարակությունը կազմված են մարդկանցից, սակայն վերջիններիս մասնակցությունը պետական ու հասարակական կյանքին պակաս ստեղծագործական է, քան քննադատաբար մտածող անհատների աշխատանքը, որոնց հաճախ անվանում են նաև «ժամանակի գիտակցություն»: Ամբոխի վարքը, համոզված է Ֆրանգյանը, սովորաբար որոշվում է գրավիչ տրամադրությունների ներգործությամբ և ենթակա է առաջնորդի ուժեղ ազդեցությանը: Որպես առաջնորդ հանդես է գալիս այն մարդը, ով մյուսներից ավելի արագ ու լավ է որսում ամբոխի տրամադրությունը, կարգին չարտահայտված նրա ձգտումները, մղումներն ու շարժառիթները կամ ընդունակ է ամբոխին հասցնելու իրեն ցանկալի վիճակի: Ամբոխն առանց առաջնորդի ոչինչ չի կարող անել: Ժողովուրդները չափազանց մեծ դեր են խաղում խոշոր, հեղաշրջող գաղափարների տարածման գործում, բայց այդ գաղափարների ստեղծմանը նրանց մասնակցությունն անհամեմատ փոքր ու աննշան է անհատի ստեղծագործական ուժի համեմատությամբ: այստեղ զանգվածներն ավելի շատ օգնող են: «Մասսան կարող է միայն երեք դեպքում ուշադրութեան արժանանալ. առաջին՝ անորոշ կօպիա մեծ մարդկանց՝ վատ թղթի վրա. երկրորդ, նրանց համար որպես խոչընդոտ և երրորդ, մեծերի ձեռքին որպես գէնք»¹³:

Ֆրանգյանի կարծիքով՝ պատմական զարգացումն ունի և՛ ժողովրդա-

¹² Харт М., Сто великих людей. М., 1998, с. 11-12.

¹³ Ե. Ֆրանգյան, Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը, նշվ. հրատ., էջ 73:

կան զանգվածների, և՛ անհատների կարիքը: Գաղափարներն առաջանում են անհատական, տարածվում՝ կոլեկտիվ կերպով: Անհատները կատարելապես ազատ չեն ամենից առաջ այն պատճառով, որ նրանք միջավայրից և զանգվածներից են ստանում նյութ իրենց գործողությունների համար: Անհատների և զանգվածների միջև գոյություն ունի հաստատուն փոխազդեցություն՝ փոխալսմանավորող և փոխլրացնող: Անհատներն են ձևակերպում, ի մի բերում ժողովրդական զանգվածների ցրված մտքերը, անորոշ ու չձևավորված տրամադրությունները և այդ առումով ավելի հեշտությամբ են կարողանում զանգվածներին որոշ ուղղությամբ առաջ մղել. «Մեծ մարդկանց, քննադատօրէն մտածող անհատների ոյժը կայանում է հինգ նրանում, որ նրանք կարողանում են պատմական մօմենտները, քաղաքական-հասարակական շարժումները ձևաւորել, ձևակերպել և իրենց ակտիւ մասնակցութեամբ այդ շարժումներին համապատասխան ընթացք և մղում տալ»¹⁴: Պատմության ողջ ընթացքը վկայում է, որ ոչ մի սոցիալական ուժ, ոչ մի խումբ պատմության մեջ չի հասել գերիշխանության, եթե առաջ չի քաշել իր քաղաքական առաջնորդներին, իր առաջավոր ներկայացուցիչներին, որոնք ընդունակ են կազմակերպել շարժումը և ղեկավարել այն:

XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին արդիական էին խառնվածքի ու մտավոր ուժի շնորհիվ պատմության ընթացքը փոխելու ընդունակ միայնակ անհատի և ամբոխի իռացիոնալ վարքի փոխհարաբերության հիմնահարցերը, որոնց լուծման մեջ էական ավանդ ունի նաև ժուս հրապարակախոս, սոցիոլոգ Ն. Միխայլովսկին, որի ներդրումն էլ գնահատում է Ֆրանգյանը¹⁵:

Միխայլովսկին իր «Հերոսներն ու ամբոխը», «Գիտական նամակներ (հերոսների ու ամբոխի հարցի շուրջ)», «Ղարծյալ հերոսների մասին», «Ղարծյալ ամբոխի մասին» հոդվածներում ձևակերպեց նոր տեսություն և ցույց տվեց, որ անհատ ասելով պարտադիր չէ պատկերացնել ականավոր և արդեն հայտնի, հեղինակություն դարձած անհատին. դա սկզբունքորեն կարող է լինել ցանկացած անհատ, ով հանգամանքների բերումով որոշակի իրավիճակում հայտնվել է զանգվածի գլխին կամ պարզապես առջևում: Ընդ որում, ըստ Միխայլովսկու, անհատի ազդեցությունը պատմության ընթացքի վրա պայմանավորված է նրանով, թե որքան մեծաթիվ է այն զանգվածը, որը գնում է նրա հետևից, և որի վրա նա հենվում է որևէ խմբի, շերտի, խավի միջոցով: Այդ պատճառով ականավոր անհատը պետք է օժտված լինի ոչ միայն անհատական տաղանդով, այլև մարդկանց կազմակերպելու և իր հետևից տանելու շնորհքով: Միխայլովսկու ուսմունքի էությունն այն է, որ անհատն իր հուզական, մտավոր, կազմակերպական ու այլ տրամադրություններով և գործողություններով որոշակի պահերի կարող է կտրուկ հզորացնել ամբոխին (լսարանին, խմբին), ինչից ողջ գործողությունը ձեռք է բերում հատուկ ուժ: Անհատի դերը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է նրա հոգեբանական ազդեցությունն ընկալելի զանգվածի համար: Միխայլովսկու գաղափարները որոշակի տեսանկյունից մեկնաբանելու դեպքում կարելի է ասել, որ անհատի դերը կախված է այն բանից, թե ինչ ուժ է

¹⁴ Ե. Ֆրանգյան, Հասարակագիտական էտիլոներ, նշվ. հրատ., էջ 77:

¹⁵ Տե՛ս Ե. Ֆրանգյան, Ն. Կ. Միխայլովսկին որպէս փիլիսոփա-սոցիոլոգ, Եր., 1911: Նույնի՝ Ն. Կ. Միխայլովսկի (նրա մահուան տասնամեակի առիթով. 1904-1914), «Գործ», Բաքու, 1914, թիվ 2՝ էջ 2, թիվ 3՝ էջ 2-3:

նա գլխավորում կամ ուղղորդում, և նրա ուժը դրա հաշվին բազմակի մեծանում է: Նման մեկնաբանմամբ լուծում է ստանում անհատի դերի հիմնախնդրի կարևոր կողմերից մեկը՝ անհատի ու զանգվածի փոխհարաբերությունը:

Իհարկե, ականավոր անհատը պետք է օժտված լինի գործունեության մի տեսակի կամ մի շարք տեսակների ոչ սովորական հմտություններով, բայց դա բավարար չէ. հասարակության մեջ նրա զարգացման ընթացքում պետք է առաջադրվեն այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ լինի համապատասխան (ռազմական, քաղաքական, մտավոր, կազմակերպական և այլ) ընդունակություններով օժտված անհատ: Իսկապես, ականավոր անհատը ոչ միայն չի փորձում «փոխել» պատմության օրենքները, այլ, հակառակը, ինչպես նշում էր Պլեխանովը, ավելի հեռում է տեսնում և մյուսներից ավելի շատ է ցանկանում: Մեծ անհատը լուծում է խնդիրներ, որոնք առաջադրվել են հասարակության մտավոր զարգացման նախորդ ժամանակահատվածում, նա մատնանշում է նոր հասարակական կարիքներ, խնդիրներ, սոցիալ-քաղաքական պահանջներ, որոնք նախապատրաստվել են հասարակական հարաբերությունների զարգացման նախորդ փուլում, իր վրա է վերցնում դրանց լուծման բարդությունն ու համարձակությունը: Դա էլ հենց նշանավոր մարդու կոչումն է ու առաքելությունը:

Հետևաբար, ինչպես Պլեխանովի, այնպես էլ Ֆրանգյանի կարծիքով՝ գիտակցությամբ և կամքով օժտված անհատների դերը պատմության համար անտարակուսելի է: Ֆրանգյանը չի անտեսում նաև այն բնական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների նշանակությունը, որոնցում ապրում է այդ անհատը: Պատմական կազմավորիչ գործընթացում վճռորոշ են և՛ նյութական-տնտեսական, և՛ մշակութային-մտավոր, հոգեբարոյական գործոնները: Այն մոտեցումները, ըստ որոնց անհատը գործում է համապատասխան պատմական միջավայրում, ձևակերպել են Ու. Ջեյմսը, Կ. Լամպրեխտը և այլք XIX դարում: Բայց որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ «պատմական միջավայրի» տեսության հեղինակը Հեգելն է: Նա է ստեղծել համաշխարհային պատմական գործընթացի տեսությունը՝ համապատասխանաբար, խոսելով համաշխարհային-պատմական անհատների մասին: Բանավիճելով լուսավորիչների հետ, ովքեր անընդհատ կոչ էին անում սովորել պատմությունից, Հեգելը նշում էր, որ տիրակալները, որպես կանոն, ոչինչ չեն սովորում պատմությունից, քանի որ «յուրաքանչյուր դարաշրջանում հայտնվում են այնպիսի հատուկ հանգամանքներ, յուրաքանչյուր դարաշրջանում ստեղծվում է այնպիսի առանձնահատուկ դրություն, որ անհրաժեշտ և հնարավոր է լինում ընդունել միայն այնպիսի որոշումներ, որոնք բխում են հենց այդ իրադրությունից»¹⁶: Այլ կերպ ասած՝ այդպիսի դասերը չի կարելի ընդունել ինքնին, առանց խոր ու ստեղծագործական վերամշակման: Այստեղից կարելի էր կատարել կարևոր եզրակացություն առանձին անհատների գործողությունների հաջողության (կամ անհաջողության) պատճառների վերաբերյալ. նրանց որակները, նպատակներն ու ռազմավարությունները համապատասխանում էին (կամ չէին համապատասխանում) դարաշրջանին ու տվյալ պահին:

Անդրադառնալով այդ ուսմունքին՝ Ֆրանգյանը որոշ իմաստով ճշմարիտ է համարում այն միտքը, թե պայմաններն են ստեղծում մարդկանց, բայց միաժամանակ կարծում է, որ ճիշտ է նաև այն դրույթը, թե մարդը չի ուզում

¹⁶ Гегель Г., Философия права, т. 7. М., 1934, с. 7-8.

պայմանների ստրուկը լինել. նա ստեղծում է նոր պայմաններ և ազդում այդ պայմանների վրա: Այստեղ դեր են խաղում մարդու անհատական ընդունակությունները, գիտակցությունը և հատկապես կամքը. «Թէև պատմականօրէն երևոյթները որոշուում են, հասարակական միջավայրը հասունանում է, բայց որոշ իդէալ ունեցող անհատները և խմբակցութիւնները իրենց կնիքն են դնում շարժման ընթացքի վրայ, վճռական ձևաւորման մէջ: Հէնց դրանումն է կայանում անհատի ներգործօն մասնակցութիւնը և այդպէս պիտի հասկանալ այն միտքը, երբ ասում են՝ պատմութիւն ստեղծել»¹⁷:

Անհատի գործունեության հետ կապված՝ Ֆրանգյանը քննարկում է նաև կամքի ազատության հիմնահարցը: Ֆրանգյանը չի ընդունում ո՛չ ինդետերմինիստների կամքի բացարձակ ազատությունը՝ անկախ հասարակական կարգերից ու միջավայրի պայմաններից, ո՛չ էլ դետերմինիզմի այն տեսակետը, թե անհատի գործողությունները որոշվում են հասարակական կարգերով՝ լինելով դրանց արդյունքը: Ճշմարտությունն այդ երկուսի համադրությունն է: «Կամքը, անհատական կամեցողութիւնը չի ներկայանում սոսկ հետևանք, այլ նաև պատճառ: Մարդը իր կամեցողութեամբ մտնում է իրերի պատճառականութեան կապակցութեան մէջ»¹⁸: Այսպիսով, ըստ Ֆրանգյանի, մի կողմից՝ հասարակական ու բնական պայմանները, մյուս կողմից՝ կամքով ու գիտակցությամբ օժտված անհատները գտնվում են փոխազդեցության մեջ, այսինքն՝ բացառիկ նշանակություն չի վերագրվում ո՛չ միջավայրին, ո՛չ անհատներին՝ առանձին-առանձին վերցված. յուրաքանչյուր մարդ իր ժամանակաշրջանի ծնունդն է, յուրաքանչյուր բացառիկ անհատ՝ իր բացառիկ դարաշրջանի ծնունդը:

Այսպիսով՝ XX դարասկզբի հայ փիլիսոփա Երվանդ Ֆրանգյանը, պատմական ռեալիզմի տեսության դիրքերից անդրադառնալով պատմության փիլիսոփայության կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ պատմության ընթացքի վրա անհատի ունեցած ազդեցության հարցի ուսումնասիրությանը, ընդունում է թե՛ անհատների, թե՛ զանգվածների դերը պատմության մեջ: Անհատները պատմության ընթացքի վրա ազդում են գիտակցաբար, զանգվածները՝ մեքենայորեն, ինքնաբերաբար: Միաժամանակ Ֆրանգյանն ընդգծում է նաև պատմական կազմավորիչ գործընթացում նյութական-տնտեսական և մշակութային-մտավոր գործոնների, հասարակության ընդհանուր համակարգի և ընձեռած հնարավորությունների, միտումների կարևորությունը:

¹⁷ Ե. Ֆրանգեան, Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը, նշվ. հրատ., էջ 153:

¹⁸ Ե. Ֆրանգեան, Պատմափիլիսոփայութիւն. գիտական-փիլիսոփայական էտիդ., Եր., 1909, էջ 56:

СОФЬЯ ОГАНЯН

Доцент кафедры "Философии и истории армянского народа" АГЭУ,
кандидат философских наук

Ерванд Франгян и вопрос оценки влияния личности на ход истории. - Армянский философ начала XX века Ерванд Франгян, с позиции теории исторического реализма изучив одну из важнейших проблем философии истории - вопрос влияния личности на ход истории, признает роль и личностей, и масс в истории. Личности влияют на ход истории сознательно, а массы - механически, произвольно. Одновременно Франгян подчеркивает также важное значение материально-экономических и культурно-интеллектуальных, духовно-нравственных факторов в историческом процессе.

SOFYA OHANYAN

Associate Professor at the Chair of
„Philosophy and Armenian History" at ASUE,
PhD in Philosophical Sciences

Yervand Frangyan about an Individual's Influence on History.- Yervand Frangyan was an Armenian philosopher at the beginning of the twentieth century. He studied the important problem of history's philosophy from the point of view of historical realism, and an individual's influence upon the process of history. Frangyan accepted the role of individuals, and the role of masses in history. Individuals influence the process of history consciously, and masses – mechanically, spontaneously. At the same time Frangyan underlined the important meaning of material-economic, and cultural-intellectual factors in the historical process.